

նամբք և որդուովք՝ մինչև արտաքոյ քաղաքին: Եւ եղեալ ծուներ առ ծովեղերին՝ կացաք յաղօթս, եւ հրաժարեցաք ի միմեանց և ելաք ի նաւն. եւ նոքա զարձան յիւրեանց տեղիս» (ԻԱ, 3-6):

Բ. դարուն Տիւրոսի եպիսկոպոսն էր Կասսիանոս, որ Կեսարիոյ ժողովին ներկայ գտնուեցաւ. յիշեցինք արդէն տեղացի Տիւրանոս եպիսկոպոսը որ ուրիշներու հետ նահատակուեցաւ այս քաղաքին մէջ Դիոկղետիանոսի օրով. իր յաջորդը Մեթոսիոս 311 ին վախճանեցաւ Աթէնքի մէջ: Դ. դարուն, Տիւրոս Փիւնիկէի ամենէն ծաղկեալ քաղաքներէն մին զարձաւ: Յերոնիմոսի համաձայն, նոյն քաղաքը ծաղկեալ վիճակի մէջ շարունակեց մինչև իսլամներուն գրաւումը:

Տիւրոսի ամէն կողմը կը տեսնուին Խաչակիրներու ամրոցներուն հետքերը, բայց այցելութեան արժանի միակ յիշատակարանն է հին Մայր եկեղեցին՝ քաղաքին հարաւը: Նախկին Մայր եկեղեցին որ կառուցուած է միեւնոյն տեղը՝ իբր գերեզմանատեղի ծառայած է Որոզինէսի որ 224 ին մեռած է Տիւրոսի մէջ: Դիոկղետիանոսի օրով, 303 ին ան կործանուած ըլլալով՝ քաղաքին եպիսկոպոս Պաւղինոսի(*) կողմէ վերաշինուած է եւ յետոյ՝ Խաչակիրներէն: 1190 ին Ծրէտէրիք Շիկամորուս հոն թաղուած է:

Տիւրացիներուն նման Սիդոնացիներն ալ բազմութեամբ Գալիլիա գացին տեսնելու Փրկիչը եւ լսելու

(*) Պաւղինոս նախ երէց էր Անտիոքի եկեղեցիին եւ յետոյ կոչուեցաւ Տիւրոսի եպիսկոպոսութեան: Եւսեբիոս իր Եկեղ. Պատմութիւնը եւ ուրիշ գործեր կը նուիրէ այս եպիսկոպոսին՝ որուն առաջակովը գրի առած էր իր Եկեղ. Պատմութիւնը: Պաւղինոսի Տիւրոսի մէջ շինած Մայր եկեղեցիին կացրդական հաւը տեսնել՝ Եւս. Եկեղեցական Պատմութիւն (Ժ. դպր. Դ.):